

«Համապատասխան Էմ»

Մոք և մանկական առողջության պահպանման
զիտահետազոտական կենտրոնի տնօրեն,

բժիշկ՝ պլուֆիսոր Գ.Գ. Օլոնի



Կարծիք

Առաջատարկազմակերպության

Ուղարկած Արամի Ճգմացյանի «Լետրոզոլի արդյունավետությունը օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաներում ձվարանների պոլիկիստոռ համախտանիշով կանանց մոտ» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԴ 00.01. «Մանկաբարձություն և զինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական զիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման

Զվարանների պոլիկիստոռ համախտանիշը (ԶՊԿ) տարածված էնդոկրին պաթոլոգիա է, որն ախտահարում է մինչև 10% վերարտադրողական տարիքի կանանց: Միևնույն ժամանակ, ըստ եվրոպական չափանիշների, ԶՊԿ-ի տարածվածությունը կազմում է մոտ 15%, իսկ էնդոկրին անպտղությամբ տառապող կանանց մոտ այն հայտնաբերվում է 53-73% դեպքերում: Անպտղությամբ տառապող ամուսնական զույգերի մոտ այս պաթոլոգիան գրավում է 5-6-րդ տեղը՝ կազմելով շուրջ 20-22%:

ԶՊՀ-ի դեպքում օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաներում ձվագատման խթանումը հանդիսանում է առաջատար օղակ: Ներկայումս գտնում են, որ ԶՊՀ ունեցող հիվանդների պտղաբերության վերականգնման հիմնական միջոց հարկ է համարել օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաները /ՕՎՏ/, որի նպատակը ոչ թե կնոջ բուժումն է, այլ ձվագատման խթանման կոնկրետ ցիկլում հղիության կայացումը: ՕՎՏ-ի հասկացության մեջ ընդգրկվում են ոչ միայն արտամարմնային բեղմնավորման (ԱՄԲ) մեթոդները, այլ ձվագատման խթանման տարբեր մեթոդների կիրառմամբ բնական ձանապարհով հղիանալը:

Այս նպատակով անհատապես կիրառվում են տարբեր դեղամիջոցներ և նրանց անալոգները՝ համակցված օրալ հակաբեղմնավորիչներ, գոնադոտրոպիններ, գոնադոտրոպին-ոխլիզինզ հորմոնի անալոգներ, առոմատազայի ինհիբիտորներ:

Մինչ վերջերս ձվագատման խթանման համար որպես նախընտրելի դեղամիջոց համարվել է կլոմիֆեն ցիտրատը /ԿՅ/, որն առաջին անգամ սինթեզվել է 1956 թվականին: Բայց, արդյո՞ք ԿՅ-ն համարվում է առաջին ընտրության դեղամիջոց ԶՊՀ-ով կանանց անպտղության բուժման համար: Այս հարցը ծագել է ԿՅ-ի, որպես էստրոգենային ռեցեպտորների սելեկտիվ մոդուլյատորի կիրառման ողջ ընթացքում, և մինչ օրս չկա միանշանակ պատասխան՝ օգտագործել այն որպես մոնոթերապիա, թե այլ պրեպարատների հետ համակցված: Կարևոր հարց է, թե ԿՅ-ով բուժման ֆոնի վրա քանի տոկոս դեպքերում է ԶՊՀ ունեցող կանանց մոտ հղիություն կայանում: Պարզվել է, որ ԿՅ կիրառման դեպքում ձվագատումը վերականգնվում է 80% դեպքերում, իսկ հղիությունը կայանում է միայն 35–40% կանանց մոտ:

Այսօր շատ հարցեր են ծագում գոնադոտրոպինների օգտագործման վերաբերյալ: Դրանք իրապե՞ս համարվում են երկրորդ ընտրության դեղամիջոցներ ԶՊՀ-ով կանանց պտղաբերությունը վերականգնելու համար, և, արդյո՞ք իմաստ ունի դրանք օգտագործել այդ համախտանիշով հիվանդների մոնոթերապիայի համար՝ հաշվի առնելով այս հիվանդության ախտածնության մասին գոյություն ունեցող ժամանակակից տվյալները (օրինակ, ինսուլինառեզիստենտության տեսությունը):

Զվագատման վերականգնման համար որպես ԿՅ-ի այլընտրանք 2004 թվականից սկսել են կիրառել արոմատազայի ինհիբիտորներ, օրինակ լետրոզոլ (ԼԶ): Սակայն այս պրեպարատների արդյունավետության մասին եզրակացություններն, այնուամենայնիվ, միանշանակ չեն:

Բարձր արդյունավետությամբ և բարդությունների ցածր հաճախությամբ ձվագատում խթանելու նոր մեթոդների մշակումը կամ բուժման սխեմայի պարզեցումը՝ դրանց արդյունքների պահպանման պայմանով, խնդիրներ են, որոնք դեռևս լուծված չեն: Այսօր ԼԶ-ը կարելի է համարել անպտղության բուժման հեռանկարային մեթոդներից մեկը: Սակայն, պրեպարատի արդյունավետությունը և նրա անվտանգությունը դեռևս ուսումնասիրման փուլում են:

Ոուզաննա Արամի Ճզմաշյանի ատենախոսությունը արդիական է և նվիրված ՕՎՏ-ում ՀՊՀ-ով կանանց մոտ լետրոգովի արդյունավետության բացահայտմանը:

Ատենախոսությունը կառուցված է ավանդական ձևով: Այն շարադրված է համակարգչային 115 էջի վրա և կազմված ներածությունից, գրականության ակնարկից, հետազոտության նյութի և մեթոդների նկարագրումից, սեփական հետազոտությունների արդյունքների ներկայացումից, ստացված արդյունքների քննարկամն զիսից, եզրակացություններից, գործնական առաջարկներից և գրականության ցանկից: Գրականության ցանկը կազմված է 236 սկզբնաղբյուրներից, որոնցից 54-ը ոուսալեզու և 182-ը օտարալեզու: Ատենախոսական աշխատանքը պատկերազարդված է 20 աղյուսակներով և 4 նկարներով:

Ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ տեսական եզրահանգումները թույլ են տալիս ՀՊՀ-ով անպտղությամն կանանց բուժման դեպքում իրականացնել համակարգված մոտեցում: Այսպես, բացահայտվել է արոմատազայի ինիֆիտորների կիրառման նպատակահարմարությունը կլոսիֆեն-ոեզիստենտ հիվանդայցելու կանանց մոտ: Իրականացվել է ԿՅ և ԼԶ պրեպարատների արդյունավետության համեմատական գնահատում ներարգանդային սերմնավորման /ՆԱՍ/ ծրագրերում ընդգրկված ՀՊՀ-ով անպտուղ կանանց մոտ: Ցույց է տրվել ԼԶ-ով և գոնադոտրոպիչներով համակցված բուժման կլինիկական արդյունավետությունը:

ԱՄԲ-ն շրջանակներում ապացուցվել է ԼԶ-ի դերը հատուկ ենթախմբի՝ ձվարանների գերխթանման համախտանիշի /ՀԳԽՀ/ զարգացման խիստ բարձր ռիսկ ունեցող ՀՊՀ-ով անպտղությամբ կանանց բուժելիս: Վերը նշված բարձր ռիսկի խմբի կանանց մոտ որոշվել են ձվարանի խթանման նոր չափանիշներ, ուսումնասիրվել են ԱՄԲ-ի հիմնական ցուցանիշները՝ ներառյալ ֆոլիկուլոգենեզը, էմբրիոզենեզը, բեղմնավորման, հղիության և ծննդաբերության հաճախությունը, ինչպես նաև հղիության ընթացքի բարդությունների հաճախությունը: Մշակվել է և առաջարկվել ձվարանների խթանման սինեմա այն կանանց համար, ովքեր ունեն ՀԳԽՀ-ի զարգացման առանձնահատուկ բարձր ռիսկ և ցույց է տրվել այդ սինեմայի կիրառման բարձր արդյունավետությունը:

Սույն ատենախոսական աշխատանքի արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ստացված արդյունքների կիրառումը թույլ կտա բարձրացնել ոչ միայն ձևազատական ցիկլերի վերականգնման հաճախությունը, այլ և հղիության կայացման հաճախությունը՝ միաժամանակ խուսափելով ԱՄԲ-ի լուրջ այնպիսի բարդությունից, ինչպիսին է ձևարանների գերիքանման համախտանիշը:

Պարզվել է ԼԶ-ի ազդեցությունը՝ կախված ձևազատման խթանման մեթոդից (մոնոթերապիա կամ ԼԶ-ի համակցումը գոնադոտրոպինների հետ), ինչը թույլ է տվել ձևազատման խթանումը սկսել չափավոր դեղաչափով և կրծատել բուժման տևողությունը:

ԱՄԲ-ի շրջանակներում ԼԶ-ի կիրառումը՝ գոնադոտրոպինների հետ զուգընթաց, թույլ է տալիս կրծատել դեղամիջոցների ընդհանուր չափաքանակը, ձևարանների խթանման տևողությունը և նվազեցնել կողմնակի երևույթների հաճախությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները գտել են իրենց արտացոլումը հեղինակի 6 գիտական աշխատանքներում:

Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքի արժանիքների և գործնական նշանակությունը, անհրաժեշտ է նշել նաև տեղ գտած որոշ թերությունների և վրիպումների մասին.

1. Հիվանդայցելուներին հետազոտության մեջ ներգրավելու չափորոշիչ են հանդիսացել դաշտանային ցիկլի խանգարումները, մինչդեռ առավել ճիշտ կլիներ ըստ Ռոտտերդամյան չափանիշների նշել օլիգո-անօվուլյացիայի առկայությունը:
2. Որպես ձևարանների պոլիկիստոզ համախտանիշի գերաձայնային չափանիշ ատենախոսության մեջ ընտրվել է անտրալ ֆոլիկուլների քանակի 12 և ավել ցուցանիշը, մինչդեռ ներկայումս ժամանակակից գերձայնային հետազոտության սարքերի ներդրման հետ կապված այս չափանիշը վերանայվել է (19-20 և ավելի):
3. Գիտական աշխատանքում առկա են որոշ կրկնություններ, ուղղագրական սխալներ և վրիպումներ:

Սակայն ներկայացված դիտողությունները սկզբունքային չեն և չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի արժեքականությունը:

Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կցանկանայինք լսել ատենախոսի պատասխանները հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք հեղինակը գտնում է նպատակահարմար օգտագործել զիտական հետազոտություններում ԶՊՀ-ի ախտորոշման համար Ռուստերդամի չափանիշները, որտեղ հաշվի են առնվում ախտաբանության միայն 3 չափանիշներ: Չե՞ որ այսօր հիվանդության էթիոլոգիան և պաթոգենեզը ներկայացվում են իր արտահայտման ավելի լայն մասշտաբով:
2. Որպես աշխատանքի զիտական նորույթ նշված է, որ «առաջին անգամ աշխարհում» ցույց է տրվել ԼԶ-ի դերը ԱՄԲ-ի ծրագրերում պոլիկիստող ձվարանների համախտանիշով և ձվարանների հիպերստիմուլյացիայի զարգացման բարձր ռիսկ ունեցող կանաց խմբերում: «Առաջին անգամ աշխարհում» եղրահանգման համար անհրաժեշտ է զրականության սկզբնադրյուրների լայնածավալ, ապացուցողական հիմք ունեցող որոնողական աշխատանք: Արդյո՞ք իրականացվել է նման աշխատանք և ինչ որոնողական սկզբունքներ և կայքեր են օգտագործվել դրա համար, և եթե այս, ապա ստացված տվյալները, որպես եզակի, մեր կարծիքով, պետք է ներկայացնել՝ ստանալու հեղինակային իրավունք:
3. Ձվարանների պոլիկիստող համախտանիշի պաթոգենեզում զգալի դեր ունեն մետաբոլիկ խանգարումները: Չեր հիվանդացելուները անցե՞լ են հետազոտություններ այս ուղղությամբ և համապատասխան նախապատրաստում օժանդակ վերաբետադրողական տեխնոլոգիաների իրականացումից առաջ:

Սեղմնագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են սեղմագրում:

Եզրակացություն: Ռուզաննա Արամի Ճգմացյանի «Լետրոզոլի արդյունավետությունը օժանդակ վերաբետադրողական տեխնոլոգիաներում ձվարանների պոլիկիստող համախտանիշով կանաց մոտ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից բժշկության կարևոր խնդիրներից մեջին, հանդիսանում է ավարտուն զիտական աշխատանք: Բովանդակությամբ,

ծավալով, նյութի մշակման և վերլուծության մակարդակով, ստացված արդյունքներով և գիտական նշանակությամբ այն համապատասխանում է ՀՀ-ի ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի աստիճանի ԺԴ.00. «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի» գիտական խորհրդի 2021թ. օգոստոսի 16-ի նիստում (արձանագրության թիվ 3), որին ներկա էին գիտական խորհրդի 13 անդամներից 11-ը. բ.գ.դ. պրոֆեսոր Գ.Գ.Օկոնը (ԺԴ.00.01), բ.գ.դ., պրոֆեսոր Կ.Կ.Առուստամյանը (ԺԴ.00.01), Ս.Դ.Բարսեղյանը, բ.գ.թ. Ա.Ա.Գասպարյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ա.Հ.Խաչատրյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ս.Ս.Թադևոսյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Է.Ս.Տոտոյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Հ.Պ.Ազարյանը (14.00.16 Ախտաբանական ֆիզիոլոգիա), բ.գ.թ. Ժ.Մ. Հարությունյանը (03.00.13, Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա), բ.գ.թ. Ս.Ի.Ազիզյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ն.Գ.Ֆրոլովան (ԺԴ.00.01):

Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի փոխնօրեն գիտության գծով, բ.գ.դ., պրոֆ.

Առուստամյան Կ.Կ. Առուստամյան

Կ.Կ. Առուստամյանի ստորագրությունը նշանակում է մի

Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի կաղըերի բաժնի պետ



Ս.Ս. Գրիգորյան